



News Release

Մայիսի 20, 2020 թ.

HSBC Հայաստանն ու ԶՈԱՖ-ը կրթաթոշակներ են տրամադրում մարզաբնակ ուսանողներին

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (HSBC Հայաստան) և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ԶՈԱՖ) 6-րդ տարին շարունակ համատեղ իրականացնում են բուհերում սովորող մարզաբնակ ուսանողներին ուղղված «Կրթաթոշակների ծրագիր»: Այս տարվա կրթաթոշակների ծրագրային ընդհանուր ֆոնդը կազմել է 13.1 միլիոն ՀՀ դրամ, որից 9.7 միլիոն ՀՀ դրամը տրամադրել է HSBC Հայաստանը:

Երկու կազմակերպությունների վեցամյա համագործակցության արդյունքում ավելի քան 100 մարզաբնակ ուսանողների ընձեռնվել է Հայաստանի պետական և մասնավոր բուհերում ու միջին մասնագիտական հաստատություններում ստացիոնար և հեռակա կրթություն ստանալու հնարավորություն:

Ի լրումն ֆինանսական աջակցության՝ նշված կազմակերպություններն ուսանողների համար մշակել են կարիերայի զարգացման փաթեթ, որը ներառում է պրակտիկա, մենթորություն և աշխատանքային հմտությունների զարգացման դասընթացներ: Ծրագրի նպատակն է աշխատաշուկայում մրցունակ, գիտակ և մասնագիտական հմտություններ ունեցող կադրերի պատրաստումը:

«HSBC-ում մենք չափազանց կարևորում ենք կրթությունը՝ որպես ժամանակակից աշխարհում հաջողության հասնելու գրավականներից մեկը: Մեր Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությունը հատուկ շեշտադրում է երիտասարդների շրջանում ապագայի աշխատանքային հմտությունների զարգացման և զբաղվածության խթանման հարցերը: Ծրագիրն էլ ավելի էմ կարևորում, քանի որ այն ուղղված է մարզաբնակ երիտասարդներին, որոնց կարիերա կառուցելու հնարավորությունները ավելի սակավ են մայրաքաղաքում բնակվող երիտասարդների համեմատ», - ասաց HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանը:

PUBLIC

Ի լրումն ֆինանսական աջակցությանը՝ HSBC Հայաստանի աշխատակիցները ծրագրի մենթորության բաղադրիչի շրջանակում հանդես են եկել որպես կամավորներ: Մայիսի 15-ին կայացավ 2019-2020 ուսումնական տարվա 21 կրթաթոշակառուների և վերջիններիս մենթորությունը կամավոր հիմունքներով ստանձնած HSBC Հայաստանի 21 մասնագետների միջև առաջին առցանց հանդիպումը: Ծրագրի մասնակիցները հստակեցրին համագործակցությունից բխող իրենց ակնկալիքները և պարտավորությունների շրջանակը:

«Սա կյանքում տրվող եզակի հնարավորություն է, երբ անձնական ու մասնագիտական աճի որոշակի ճանապարհ անցած մասնագետը հայտնում է ժամանակ ու ռեսուրս տրամադրելու պատրաստակամություն երիտասարդների զարգացման ու սեփական ուղին հարթելու խրախուսման նպատակով: Զաղեք առավելագույնը ձեր համագործակցությունից»,- կրթաթոշակառուներին դիմեց ԶՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը:

Վեց տարվա ընթացքում ծրագրի շրջանակում ներառվել են Հայաստանի 5 մարզերի 25 համայնքների 100-ից ավելի ուսանողներ: Մինչ օրս ծրագրի արժեքը կազմել է ավելի քան 80,000 ԱՄՆ դոլար:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 65 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել են 2,918 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 362 աշխատակիցների միջոցով: 2020թ. -ի մարտի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 298 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԻ-ԷԼ-ՍԻ Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկեր:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ԶՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ԶՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կղառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ԶՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին՝ ծառայելու մարզի շուրջ 150 հազար բնակիչներին: